ՆՈՐ-ԴԱՐ

№ 132 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ, 25 Յուլիսի 1898 Շաբաթ, 25 Յուլիսի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 132

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ"
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar"

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառն՝ 2 կ., րեկլամների համար՝ կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Ֆրանսիական արդարադատութիւնը և Զոլան։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են. — Ս. Էջմիածնից, Կուչկայից։
Փաստեր և մտքեր III.
Նամակ խմբագրութեան։
Թղթակցութիւններ.—Ղուբա։
Քաղաքական. — Սպանիա։ Գերմանիա։ Ամերիկա։ Ֆրանսիա։ Կրետէ։ Աւստրիա։ Իտալիա։ Բուլղարիա։ Թիւրքիա։ Չինաստան։
Բիսմարկի մահը։
Խառն լուրեր։
Հեռագրներ։
Կոչում առ հայ ժողովուրդը։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 24 յուլիսի 1898 թ.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԶՈԼԱՆ

Այս ինչ բռնութիւն է. մարդուն անմեղ տեղը տանջում են, չարչարում են, զրկում են անձնական ազատութիւնից, որ մարդուս համար ամենաթանկ բարիքն է, հեռացնում են նրան տնից, հարազատներից և խաւար բանտի մէջ շղթայում նրան։

Մարդն հաւատացնում է արտասուելով, որ ինքն անմեղ է, — չեն թողնում, որ ձայն հանի. խնդիրը ոչինչ չէ խնդրում, միմիայն արդարութիւն, միմիայն ճշմարտութիւն, միմիայն ինքն իրեն արդարացնելու իրաւունք, — նրա բերանը փակում են, նրա լեզուն պապանձեցնում են և իբրև գրաստի չարչարում են նրան…

Այդ ամենը տեսնում է հասարակութիւնը, այդ ամենը կատարւում է հասարակութեան առաջ, ընտիր ներկայացուցիչների առաջը. լսւում է մութը բանտից հալածուածի խուլ, յուսահատ հառաչանքը, և այդ հասարակութիւնը ու նրա ընտիր ներկայացուցիչներն անտարբերութեամբ անցնում են և ոչ ոք ձայն չի հանում։

Նման դէպքերով, մարդկային վայրենութեան ու բռնութեան օրինակներով լիքն է ընդհանուր պատմութիւնը։

Այդ ինչպէս է կատարւել, ինչպէս է, որ այդպիսի անարդարութիւններ տեղի են ունեցել հին ժամանակներում և ինչպէս է, որ մեր նախահայրերը զօրաւորների բռնութիւնը, անարդարութիւնը, անզօրների կրած հալածանքը, տանջանքը տեսել և համբերել են ու ձայն չեն հանել, անտարբեր են գտնուել — վրդովւած, յուզւած և արդար բարկութեամբ լցւած բացականչում է մեր ժամանակի երիտասարդը՝ կարդալով հին դարերի պատմութիւնը։

«Այդ բռնութիւն է, այդ վայրենութիւն է, այդ անկարելի է մեր ժամանակներում, մենք միթէ կը լռենք, մենք միթէ թոյլ կտանք, որ անմեղը՝ հալածուի, որ արդարադատութիւնը՝ ոտնակոխ լինի», — բարձրաձայն կանչում է արդի երիտասարդը։

Բայց եթէ մեր ժամանակակից պատմութեան հետևելու լինի նա, կտեսնի, որ ինչպէս հին ժամանակներում, այժմս էլ բռնութիւնը թագաւորում է արդարութեան վրայ, անարդարութիւններ, հալածանք տեղի են ունենում և մարդիկ ու ամբողջ հասարակութիւններ անտարբերութեամբ անցնում են, ոչ միայն չեն միջամտում, այլ փառաբանում են՝ կոյր ուժը գերադասելով արդարադատութեան սկզբունքներին։

Ահա ձեզ Դրայֆուս-Զոլայի գործը։

Դրայֆուս սպան դատապարտւած է յաւիտեան աքսորի և տանջանքի. տուն, կին, զաւակներ, պատիւ և ամեն իրաւունք թողած մեկնում է նա Սատանաների կղզին և միայն մի բան է ասում. «Ես անմեղ եմ, ինձ ի զուր տեղը դատապարտեցին». միմիայն մի ողորմութիւն է խնդրում. «Այդ գործում մի կեղծիք կայ, սխալմունք է կատարւել, շարունակեցէք, գործին հետամուտ եղէք և ես գիտեմ, որ ինձ կարդարացնէք վերջը. ես անմեղ եմ»։

—Չէ, ասում են նրան, դու յանցաւոր ես, մի քանի զինուորականներից կազմուած դատարանը չի կարող սխալուել, ձեզ օրինական ճանապարհով դատարանը մեղաւոր է ճանաչել։

Շատ լաւ, թող այդպէս լինի, Դրայֆուսը մեղաւոր է. բայց հօ հաստատ է, որ նրա վրայ դատաստան է կատարւել արդարադատութեան սկզբունքների դէմ. դատապարտել են դոկումենտների և ապացոյցների հիմանց վրայ, որոնց մասին Դրայֆուսը և նրա պաշտպան փաստաբանը տեղեկութիւն չեն ունեցել։ Մեղադրւածը չէ տեսել, նրան չեն ցոյց տուել իրեն մեղքը հաստատող վկայաթղթերը։

Այս հօ հաստատ է։

Այնուհետև դուրս են գալիս նշանաւոր մարդիկ, Սենատի փոխնախագահ Շերեր-Կեստներ, այնուհետև Էմիլ-Զոլա, Տրարիէ և այլ մեծահռչակ գիտնականներ, ինչպէս և Ֆրանսիայից դուրս նշանաւոր մարդիկ և յայտնում են, որ Դրայֆուսն անմեղ է, որ իրենք կըհաստատեն այդ, որ նա անարդարութեան, կեղծիքի, խաբեբայութեան զոհ է գնացել։

Ճշմարիտ է, փոքրամասնութիւնը, չնչին փոքրամասնութիւնն է կասկածանք յայտնողը, Դրայֆուսի օգտին ձայն բարձրացնողը, բայց այդ փոքրամասնութեան մէջ կան Ֆրանսիայի երևելի զաւակները, որոնց ձայնակցում են աշխարհիս ամեն կողմից և ամեն երկրի նշանաւոր թերթերի մեծամասնութիւնը։

Դրայֆուսին ազատեցէք և յայտնեցէք, որ նա անմեղ է… այդ հօ չեն պահանջում ֆրանսիական արդարադատութիւնից. միմիայն գործի վերաքննութիւնն են պահանջում դատաստանական սկզբունքների խիստ գործադրութեամբ։

Ի՞նչ կըկորցնի ֆրանսիական արդարադատութիւնը, եթէ վերաքննի գործը և պարզուի, որ Դրայֆուսը անմեղ է և դատարանական մի սխալ է պատահել։

Ոչինչ չի կորցնի, այլ շատ բան կըվաստակի, քանի որ այժմս ամբողջ աշխարհի մէջ այն կարծիքն է ընդհանրացած, որ Դրայֆուսի գործում անարդարութիւն է տեղի ունեցել, որ մարդն անմեղ տեղը ուրիշի յանցանքն է քաւում։

Միթէ այս կասկածանքը պատիւ է բերում ֆրանսիական արդարադատութեան, ինչո՞ւ չվերաքննել գործը, ինչո՞ւ միջոց չտալ գործը բոլորովին պարզելու, հասարակաց խիղճը հանդարտեցնելու. ինչո՞ւ. թո՛ղ մէկ էլ նորից դատապարտուի Դրայֆուսը, այն ժամանակ հօ էլ կասկած չի լինիլ, հօ ֆրանսիական արդարադատութիւնը բարձր կըլինի ամեն տեսակ կասկածանքից։

Բայց չէ, այդ չեն ուզում մի քանի զօրաւորներ. դրանք եթէ գործը վերաքննել տան, ուրիշ մեղաւորներ հանդէս կըգան և զինուորական ատեանի սխալը և ուրիշ բաներ էլ կըբացուեն. էլի լաւ է, որ անմեղ դատապարտուածը քաւէ բուն յանցաւորների մեղքը։

Եւ ահա քանի տարի է սխալը թագցնելու, կատարած յանցանքը ծածկելու համար, նոր բռնութիւններ, նոր անարդարութիւններ են կատարւում. յանցանքը ծնում է նոր յանցանք։

Այս դրութեան մէջ, ի հարկէ, այն մարդը, որ դուրս կըգայ և կըկռուի ճշմարտութեան անունով զօրեղ հօսանքի դէմ, նա կամ

ԿՈՉՈՒՄ ԱՌ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

> Մի, դուք ձեր յոյս մի աւանդէք օտարին,
> Մի խոր վէրքեր ցուցնէք անգութին,
> Արգահատանս կըյուսաք օգնութիւն,
> Ձեզ կը ծաղրեն մերկութիւն։

Այս կտակն է արել մեր ազգին բանաստեղծ եպիսկոպոս Խորէն Նարբէյը, և անկէ ի վեր պատահած սոսկալի և ողբալի անցքերը լիովին հաստատում են այդ խրատի մէն մի խօսքը։ Հարկ է մի նոր ապացոյց այդ յորդորի ճշմարտութեանը՝ — ահաւասիկ Սալմաստի Ղալասար գիւղի մէջ հաստատուած Որբանոցի վերաբերութեամբ պատահած վերջի անցքերը։

1894-ին Ամերիկայից վերադարձել էի Պարսկաստան և նպատակս էր Ուրմիում մի Որբանոց հիմնել հայ անտէր և խղճալի երեխաների համար։ Այդ նպատակն իրագործւեց. անցեալ 1897-ի ամառը գերմանական Հելֆարունի ազէնտ հեռ Հանց Ֆիշըր Ուրմիից հրաւիրեց ինձ Ղալասարի Որբանոցը հաստատելու, ուր 50-ի չափ մեծ մասամբ Աղբակեցի որբացեալ երկսեռ հայ երեխայք հետզհետէ պատսպարան և ասպնջականութիւն գըտան։ Տարւոյ վախճանին ընկերութեան գլխաւոր՝ դոկտոր Լեպսիուսն ինձ յայտնեց իւր կատարեալ գոհունակութիւնը, վստահութիւնը և շնորհակալութիւնը գործի բարւոք ընթանալուն և յառաջադիմութեան համար։ Ներկայ տարւոյ սկզբում պաստոր ֆոն Բէրգման անուն մի գերմանացի յաջորդեց Հանց-Ֆիշըրին իբր ներկայացուցիչ Հէլֆարունի և մենք էլ Պարսկաստանում նոյն ընկերութեան ունեցած կայաններին հետ՝ որոնք են՝ Ուրմի, Մաքու, Սալմաստ և Ղարադաղ, ենթարկուեցինք նրա անմիջական և լիազօր վարչութեանը։ Ղալասարի ժողովուրդն ու մենք գոհ և ուրախ էինք, որ ունեցանք մի ազնուական մարդ, ինչպէս ցոյց է տալիս պ. Բէրգմանի ֆոն մասնիկը, իբրև տեսուչ Որբանոցի, և պատւում, մեծարում, հիւրասիրում էինք նրան ամենայնիւ. բայց շատ երկար չտևեց այդ, յայտնուեց և անհերքելի փաստերով ապացուցուեց, որ պաստորը բոլորովին անարժան է եղել թէ այդ պաշտօնին և թէ վայելած համակրութեան և վստահութեան՝ բարոյական լուրջ պատճառներով։ Օտարականի նիստուկացը, գիւղ տեղում մանաւանդ, ուշադրութեան առարկայ կըլինի ամեն տեղ. այդ բանը բոլորովին մտահան էր արել պ. ֆոն-Բէրգմանը և շուտով կրեց հետևանքը։ Ցուցուեց հասարակութիւնը և գրգռուեց ազնուական դատակարգը նրա յանդգնութեան վրայ. ուզում էին դիմել ծայրահեղ միջոցների, պէտք էր նկատողութեան առնել սակայն գերմանական ընկերութեան պատիւն այդ ցաւալի դէպքում. միջամտեցի և յաջողեցայ հանդարտեցնել յուզումը։ Ապրիլի 8/20-ին հեռագրեցի դր. Լեպսիուսին պատահած անցքի մասին, յայտնելով թէ անհրաժեշտ էր հեռացնել Բէրգմանին իսկոյն և եթ, ապա թէ ոչ սկանդալն անխուսափելի կըլինէր։ Հայոց բարեկամ և պաշտպան ճանաչուած մեծանուն դոկտորը, սակայն, այստեղ յայտնեց իւր գոյնը. նա փոխանակ քննելու և իմանալու բացուած փափուկ խնդիրը, վեր է առնում նոյն իսկ Բէրգմանից հարցնում, թէ ստո՞յգ է ամբաստանութիւնը. նա էլ իսկոյն պատասխանում է, թէ բոլորովին անհիմն է։ Դա մի նոր գիւտ է հարցեր, խնդիրներ և վէճեր լուծելու առանց երկարատև ձանձրալի քննութեան. հարցրէք միշտ ամբաստանուածից, և վճռուած է հարցը։ Դոկտոր Լեպսիուսը արժանի է արդարև մեծ փառքի այս մեծ գիւտի համար։ Դոկտորն այնուհետև հրամայում է իսկոյն և եթ դադարեցնել ինձ պաշտօնից, իսկ Բէրգմանը մնում է նեղ դրութեան մէջ, և չէ գործադրում հրամանը, վախենալով ժողովրդի կատաղութիւնից, և սկսում է ինտրիգների ու խարէութիւնների դիմել. նա կանչում է Ուրմիից Շամաշա Դաւիթ Իսմայէլ անուամ մի հայատեաց կեղծաւոր ասորու և անդադար հաշտութիւն է առաջարկում։ Նորից յուզւում է Ղալասարը և մի քանի ժողովներ են լինում. վերջապէս որոշւում է, որ գիւղի համայնքը դիմէ ուղղակի դր. Լեպսիուսին, և մայիսին 5-ին հեռագրում են խնդրելով հեռացնել Բէրգմանին իրենց գիւղից։ Սրախողխող Հայաստանի վրայ կոկորդիլոսի արցունքներ թափող մեծահռչակ դոկտորն արհամարհում է մի ամբողջ հասարակութիւն և բոլորովին անպատասխանի ու անհետևանք է թողում նրանց խնդիրը, իսկ այժմ կատաղած հրամայում է մայիս 6-ի հեռագրով իւր արժանաւոր ներկայացուցիչ Բէրգմանին՝ իսկոյն և եթ պաշտօնանկ անել «գրպարտիչ Պաղդասարեանին», և դրանով խեղճ պաստորի վիճակը և գործերի դրութիւնն աւելի վատթարացնում։ «Ազնուական» պաստորը չէ համարձակւում նաև այս բացարձակ հրամանը ի գործ դնելու և միայն ամսի 9-ին վերջապէս յայտնում է վճիռը, պահանջելով որ Որբանոցը յանձնեմ և դուրս գամ. ես համակերպելով՝ հրամանին՝ 5 օրուայ միջոց խնդրեցի կարգադրութիւն անելու, իսկ Բէրգմանը հէնց հետևեալ օրն յանկարծ փախաւ մենակ Ղալասարից դէպի Թաւրիզ։

Ահա այդ օրից դր. Լեպսիուսը պատժել է Ղալասարի Որբանոցը իւր 60-ի չափ պատսպարեալներով և մի սև փող չէ ուղարկում առօրեայ ծախքերի համար. և այդ մեծ բազմութիւնը խնամում եմ ես իմ անձնական փողով, մինչդեռ դր. Լեպսիուսը ուրիշ որդեգրող բարեկամներից մեծ գումարներ է ստանում։

Աւելին կայ. յունիս 18/30-ին «ազնուական Բէրգմանը վերադառնում է Սալմաստ և առաւօտեան ժամը 10-ին յանկարծ պաշարում է Որբանոցը։ Նա կազմել էր մի ստուար արշաւախումբ. խումբը բաղկացած էր պարսիկ սարբազներից, ձիաւոր և հետևակ, կառավարութեան ֆարրաշներից, իշապաններից ու բեռնակիրներից. նաև թուրք և հայ սրբիկաներից ոչ սակաւ անձեր հաւաքել էր նա գլխին. դրանց ամենքին առաջնորդում էր մի «դաղախ» համազգեստը հագին, որ Բէրգմանի ծառան էր. գերմանացի դոն-քիշոտը ձին հեծած՝ իբր հրամանատար գալիս էր յետևից։ Պահն կրիտիկական էր, ինչ կըլինէր Որբանոցի վիճակը, եթէ կատաղի խուժանը յաջողէր ներս մտնել. սակայն Աստուած մեզ հետ էր, և մեզ յաջողւում է իսկոյն փակել որբանոցի դռները և ամրանալ նրա յետև։ Հէր պաստոր ֆոն Բէրգմանը հրամայում է բաց անել դռները. մենք պատասխանում ենք թէ այդ անկարելի է։ «Տուէք ուրեմն ռևոլվերը» բացականչում է հերոսը, իսկ մենք անվրդով դիմանում ենք սպասելով իրաց վախճանին։ Որբերը և բոլոր պատսպարեալնեխելագար է կամ կաշառւած։

Ֆրանսիայի նշանաւոր գրողը, աշխարհքին յայտնի Էմիլ Զօլան խելագար է և հրէաները նրան կաշառել են։

Եւ, արդարև, մինթէ մի մարդ հոսանքի դէմ կըկռուի, իւր տունը կըթողնի, իւր հանգիստ կեանքը կըխանգարի, ամենքին իւր դէմ կըկանգնեցնի մի որևէ, օտարմեկի, դատապարտուած և աքսոր ուղարկուած հրէայի համար. չէ՛, այդտեղ հաշիւ կայ, նա կաշառուած է հրէաներից… այդպէս են դատում ամեն տեղի ամբոխը, ամբոխամիտ ինտելիգենցիան և ամեն աշխարհի վարձկան գրիչները։

Եւ ճշմարիտ այժմեան ժամանակներում առանց հաշուի, առանց անձնական օգուտի կռուել հոսանքի դէմ, թէ ինչ է՝ անարդարութեան դէմ ես կանգնում, թէ ինչ է՝ հալածուածին ես պաշտպանում, թէ ինչ է՝ ճշմարտութիւն ես որոնում, դա խելագարութիւն է,—այդ է ամբոխի լոգիկան։

Այսօր Էմիլ Զօլան հալածուած է Ֆրանսիայում, Պարիզի զօրաւորները և կինտոները նրան ճանապարհ, հանգիստ չեն տալիս, սպառնում են մինչև անգամ մահով, հայհոյում և փտաբանում են։ Ֆրանսիայի պարծանքներից մեծը՝ Զօլան փախչում է Ֆրանսիայից օտար երկրում ապաստարան որոնելու։

Վերջին պարիզեան ցուցահանդիսում ֆրանսիացիներն աշխարհին զարմացնելու համար կանգնեցրել էին Էյֆելեան աշտարակը։ Առաջիկայ ցուցահանդիսին հարկ չկայ միլիոններ ծախսելու և այդ տեսակ աշտարակներ կանգնեցնելու։ Արդէն կայ Պարիզում կանգնած Էյֆելեանից աւելի շատ բարձր մի բռնութեան աշտարակ, որի տակը թաղուած է անարդարութեան զոհ և մարդկային խղճի բռնաբարութեան մարմնացում՝ Դրայֆուսը, իսկ աշտարակի գլխին կանգնած է Զօլան և նայում է այն քաղաքի բնակիչների վրայ, որոնց նախահայրերն արիւն թափեցին ազատութեան, եղբայրութեան և հաւասարութեան համար։

Ո՞րտեղ է այդ ազատութիւնը, ո՛ւր մնաց հաւասարութիւնը։

Այսօր Պարիզում փառաբանում են բռնութիւնը և խեղդում են արդարութեան ձայնը։

Բայց մինչև ե՞րբ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Սոյն յուլիսի 7-ին, արդարադատութեան մինիստրութեան հրամանով թոյլ է տրւում Ս. Էջմիածնի Սինոդի պրոկուրոր Կանչելուն մի ամիս արձակուրդով գնալ կայսրութեան ներքին նահանգները։

—

Թիֆլիս է հասել Ֆէօֆիլակտ վարդապետը, որը Ուրմիայում նեստորականներին ռուսադաւան եկեղեցու ծոցն ընդունելու համար կազմուած միսիայի առաջնորդ է նշանակուած։ Հայր Ֆէօֆիլակտը Մար Յօհան եպիսկոպոսի հետ երէկ, յուլիսի 24-ին, այցելութեան գնացին Վրաստանի էքզարխին, որը ներկայումս Մարտկոփի գիւղումն է, և, երևի, նրանից հրահանգներ ստանալով՝ Երևանի ու Ջուլֆայի վրայով կանցնեն Պարսկաստան։

—

Երկրագործութեան մինիստրութեան գիւղատնտեսական մասի կառավարիչ պ. Դ. Տիմիրիազեւը Կովկաս է եկել տեղական մի քանի գինեգործների ու գիւղատնտեսների յարուցած հարցերի մասին որոշում տալու։

—

Երկրագործութեան մինիստրութիւնը մտադիր է իւր հովանաւորութեան տակ առնել բոլոր սերմերի պարտէզները, աչքի առաջ ունենալով դրանց դարձնել սորին տիպի գիւղատնտեսական դպրոցներ։

—

Կանանց գիւղատնտեսական ուսուցումն տալու համար նոյն տիպի ուսումնարաններ բաց անելու հարցը շուտով ամեն կողմից կըմշակուի երկրագործական մինիստրութեան մէջ։ Այդ մասին արդէն անհրաժեշտ տեղեկութիւններ են հաւաքում։

—

Պետերբուրգի ռուսաց կայսերական տեխնիկական ընկերութիւնը իւր մօտակայ նիստերից մէկում պէտք է քննի Պարիզի 1900 թուի համաշխարհային ցուցահանդէսին իւր մասնակցելու միջոցները։

—

«Սէն. Օտեչ.»-ի խօսքերով Պետերբուրգի տեխնիկական մասնաւոր բանկը 1,500,000 րուբլով առել է Բագուի «Մասիս» ընկերութեան նաւթային արդիւնարանները։

—

Իշխան Արամելիք-Լազարեանը, «Նով.»-ի ասելով, մօտ օրերս գնել է Պոլիտոտսկի հանքային ջրերը։

—

Քաղաքային խորհուրդներին առաջարկուած է, որ պատուաւոր քաղաքացի ընտրւող անձերի ընտրութիւնը կատարուի փակ քուէարկութեամբ։

—

Թիֆլիսի նահանգի Ախալքալաք գիւղում խաղողի այգիները թէև մասամբ ցրտահար են եղել, բայց դարձեալ խաղողի առատ բերք են խոստանում։

Ցորենն հունձն էլ այս տարի առատ է։

—

Վճռուած է առաջիկայ տարուանից ուղիղ հաղորդակցութիւն հաստատել Պետերբուրգի և Թիֆլիսի միջև հեռաւոր մարշրուտով. Պետերբուրգ—Մոսկուա—Վարոնեժ--Ռոստով—(Դոնի վրայ)—Վլադիկաւկազ—Պետրովսկ—Բագու--Թիֆլիս։ Այդ յատուկ գնացքի համար մտադրութիւն կայ նոր վագոններ շինելու Սիբիրի երկաթուղու վագոնների նման։

—

Թիֆլիսի ոստիկանատան պրիստաւները հաշտարար դատաւորներին են ներկայացրել աւելի 60-ի չափ արձանագրութիւններ, որոնք վերաբերում են այն պարտադրանց տանտէրերին, որոնք տան դռների առաջ մաքրելու կանոնադրութիւնը խախտել են։

—

Ստացանք՝ Եկատերինոդար քաղաքում պաշտօնականների և տեղական աղքատների համար բաց արած ձրի ճաշարանի 1887 թ. նոյեմբերի 19-ից մինչև 1898 թ. ապրիլի վերջը եղած ելևմուտից հաշւեկշիռը, որից երևում է, թէ նախաձեռնողներին այդ նպատակի համար մուտք են ունեցել ամսական բաժանորդագրածներից ու կամաւոր նուէրներից 1575 ր. 04 կոպ., իսկ ծախսել են 1664 ր. 69 կոպ., առել է 89 ր. 65 կոպ. աւելի է ծախսուած։

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ.—Վեհափառն անցեալ օրը, յուլիսի 18-ին, մեկնեց Բիւրական, ուր, ասում են, մի քանի օր մնալուց յետոյ՝ կըվերադառնայ և այստեղից կըմեկնի Երևան, Տաթև, Նախիջևան, Ջաւչի։

—Մեր կուսակրօն հոգևորականների մէջ զգալի փոփոխութիւններ են լինում՝ տգէտները տեղի են տալիս համալսարանական ու ճեմարանականներին։ Ճեմարանի հիմնարկութեան օրից սկսած ուսանողներն այնպէս չեն ցանկացել հոգևորականութեան սքեմը կրելու, ինչպէս ներկայումս է։ Ուստի սերնդին այս կամ այն ուղղութիւն տալը կախուած է նրա ղեկավարներից։

—Բարեշնորհ Գարեգին վարդապետը ճեմարանի սաների հետ իւր Դարալագեազում կատարած ճանապարհորդութիւնից վերադարձել է արդէն։

—Սարսափելի շոգերը դեռ շարունակւում են։

—

ԿՈՒՇԿԱՅԻՑ.- Մօտ օրերս կառավարութեան կողմից յայտարարւեց տեղիս վաճառականներին, որ Աւղանստանի և Ռուսիայի մէջ արդէն առևտրական համաձայնութիւն է կայացել. այսուհետև Ռուսիայի ամեն տեսակ ապրանք ազատ կերպով կարելի է Աւղանստան տանել՝ առանց մաքս վճարելով։

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՄՏՔԵՐ

—

III.

Ջա՜ն, շա՜տ անգամ եմ սրտանց ցանկացել, տենչալով, թէ ինչպէս մի քանի շռայլ մարդիկ ժառանգաբար և կամ ուրիշ միջոցներով ձեռք բերած մեծամեծ գումարները վատնում են անօգուտ, անգամ վնասակար բաների վրայ…

Ուզում ես սպառազինուել գրչով՝ լոյս աշխարհ հանելու նրանց անխղճութիւնները,—բայց յետոյ մտածում ես՝ ինչո՞ւ. միթէ ես միայն եմ, որ նկատել եմ և կամ նկատում եմ այդ։ Հազարաւոր, միլիոնաւոր մարդիկ այդպէս են ապրում և հազարաւոր, միլիոնաւոր մարդիկ տեսնում են, նկատում են նրանց արած շռայլութիւնները, և եթէ չարիքը չի ոչնչանում,—էհ, ինչ ոչնչանալ, չի մեղմանում էլ իսկի,—ուրեմն դա մեր կեանքի ամենաւոր պահանջներից մէկն է։

Ի հարկէ, կարելի է այդ պահանջի դէմ ես կռուել, կարելի է բողոքել.—բայց դա կլինի համարեա թէ ի զուր։ Երբ կեանքը պէտք է ստեղծի նոր պայմաններ, պէտք է բարեփոխուի մեր կացութիւնը թէ տնտեսապէս և թէ բարոյապէս, և այն ժամանակ գուցէ նոր հոսանքը կըգնայ աւելի նպատակաւոր ճանապարհներով։

Կան այնպիսի հնացած, իրենց արմատները կեանքի մէջ խորը ձգած երևոյթներ, որոնց դէմ համարեա թէ անզօր են և՛ հասարակական կարծիք, և՛ հասարակական դատաստան,— բայց որոնց կարող է վերացնել ժամանակը…։

Սակայն միթէ միշտ այնպէս է պատահում, որ մեծամեծ գումարները վատնւում են շռայլութեամբ միմիայն։ Ոչ, շատ անգամ մարդիկ տոգորուած են հասարակութեանը ծառայելու ցանկութեամբ, նրանք բարի նպատակ ունեն աչքի առաջ, այդ նպատակին իրագործելու համար մեծ փողեր են մսխում,—և վերջին հաշւում միմիայն երևում է, որ փողերը վատնուել են իզուր, որ մեծ գումար է փչացուել, իսկ մէջ տեղը հասարակական օգուտ չկայ, այլ, ընդհակառակն, կայ միմիայն վնաս, որը մեզ ցաւ և հիասթափում է պատճառում։

Այդ հանգամանքը, այդ երևոյթը ծագում է նրանից, որ մարդիկ՝ ոգևորուած մի բարի ցանկութեամբ՝ իրենց հաշիւ չեն տալիս՝ արդեօք իրագործելի՞ է ներկայ պայմաններում, ներկայ հասարակութեան մէջ այդ ցանկութիւնը. և եթէ իրագործուի,—օգուտ կըտայ, թէ վնաս։

Առածիս գեղեցիկ օրինակ հեռաւոր փաստը։

Մօտ տասներկու տարի է, Հին-Նախիջևանի բնակիչները մի նոր եկեղեցի են շինում։ Շինութիւնն արտաքուստ բաւականին չքեղ է. բոլոր պատերը շարած են մեծ սալ քարերից, որոնց տեղացիք ասում են կարմիր քար և կամ Կարմիր վանքի քար։ Այդ երկար տարիների ընթացքում ծախսուել է աւելի քան 20—23 հազար մանէթ։ Բայց եկեղեցու շինութիւնը դեռ ես չի աւարտուած, և 6—7 հազար մանէթ էլ, երևի, կըգնայ։

Եկեղեցի շինելը լաւ բան է, եթէ միայն այդ բանում կարիք կայ։ Բայց ես մօտ ծանօթ եմ Նախիջևանին և գիտեմ, որ մէկ եկեղեցին էլ շատ է Նախիջևանցի հայերի համար։

Նախիջևանում շատ քիչ հայ կայ։ Քաղաքի ամենալաւ տեղերում նախիջևանցիները շինած ունեն մի մեծ ու չքեղ ե-

---

բը լաց ու կոծ են անում և շւարած, լեզապատառ չեն իմանում ուր փախչեն. ես սիրտ եմ տալիս նրանց. պատարը սպառնում է կրակել, եթէ չբանանք դուռը, իսկ մեր պատասխանը լինում է միշտ միևնոյն վճռական «չենք կարող»-ը։ Այդ միջոցին պատարի կատաղութիւնը հասել էր իւր գագաթնակէտին և ամեն բան յուսալի էր նրանից այդ րոպէին։ Լուր ենք տալիս ռուսաց թաջիրբաշի աղա Աւետիք Արզումանեանցին, որ իսկոյն շտապում է մարդ ուղարկել և հեռացնել գող-քեշիշին իւր բանակով և ազատում է Որբանոցն արիւնահեղութեան թատերաբեմ լինելուց։

Արդ, ինչ ես տեսնում դու, հա՛յ ժողովուրդ, այս բոլոր ցաւալի անցքերում և դարձուածքներում. ճշմարիտ չէ՞ միթէ անմահ հայրենասէր բանաստեղծի խօսքը՝ «օտարն, ա՜հ, միշտ է օտար»։ Ինչպէս յանձնում ենք մեր ազգի խղճալի երկսեռ որբերի բաղդն այդպիսի մարդկանց, որոնք մինչև անգամ համարձակւում են իրենց խնամոյ յանձնուած հայ որբերին դնել օսմանեան հպատակների հովանաւորութեան տակ, քանզի այս բոլոր դէպքերից յետոյ պ. Լևոնեանը նշանակում է այդ ապերախտին միջնական լիազօր ներկայացուցիչ գերմանական ընկերութեան Պարսկաստանում և համաձայնութիւն է կայացնում Օամ. Ճահբէնդէր Ռիզա-բէկի հետ, ինչպէս որ պարծենալով հռչակում է այստեղ ինքը Ռիզա-բէկը, որ այս քանի օր է Սալմաստ է եկած, որ մի մեծ Որբանոց հաստատի Խոյում և դրուի նրա անմիջական հսկողութեան տակ, և արդէն 34 հայ որբեր ընկել են այդ նոր սարքուած ուռկանը։ Նա կամենում էր նաև այնտեղ տանել Ղալասարի Որբանոցի 50 երկսեռ սաներին, բայց նրանք վճռականապէս մերժեցին գնալ նրա մօտ, հասկանալով թէ ինչ է լինելու իրենց վիճակը մի այդպիսի գառնագեստ գայլի անողոք ճիրաններում։

Պահենք, խնամենք ուրեմն, մեր որբերին մեր սեպհական հաստատութիւններին մէջ և փրկենք այդ թշուառներին հազար ու մի սպառնալից վտանգներից, որոնց նրանք միշտ պէտք է ենթարկուին օտարի հացն ուտելիս։

Հայ ժողովուրդն, հա՛յ հասարակութի՛ւն, հա՛յ բարերարնե՛ր, ձեզ են դիմում Սալմաստի Ղալասար գիւղի Որբանոցի 50 խղճալի սաները արցունք յաչկունս. ինչպէս յանձնեմ ես այդ անմեղ զոհերին մի օտարի, որ ծաղրելու է նրանց մերկութիւնը, ինչպէս հոգամ և պատսպարեմ ես նրանց, քանի որ «դի քո է կարողութիւն». ինչպէս տեսնեմ ես նրանց փողոցներում մերկ, բոկոտն, քաղցած և հիւանդ թափառելիս, քանի որ այդ է լինելու նրանց անխուսափելի վիճակը, եթէ մեզ օգնութիւն չհասնի ընդհուպ։ Յիշեցէք և միտ բերէք այդ որբերին, մեր նահատակուած, զոհուած, մորթուած եղբայրների և քոյրերի զաւակներին և մենք չենք կարող անտարբեր մնալ նրանց մասին. մեր սուրբ և անժխտելի պարտականութիւնն է օգնել նրանց։ «Ուր կամք կայ, այնտեղ կայ նաև ճամբայ» ասում է ամերիկեան առածը. թող կամք ունենանք, ուզենանք օգնութեան գնիւ ձեռք կարկառել այդ դժբաղդներին և շատ հեշտ պիտի լինի մեզ որդեգրել մի-մի որբ ազգային որբանոցներում, որոնց թիւը հետզհետէ բազմանալով, այլ ևս օտարին առաջարկելու պիտի չմնայ իւր ուռկանը հայ որբերով լցնելու։

Օգնեցէ՛ք Ղալասարի հայկական Որբանոցին, նրանք որ կարող են, թո՛ղ որդեգրեն մի-մի որբ՝ վճարելով 100 րուբլի, իսկ թող ամենքն իրենց լումաները դցեն այս ազգային բարեսիրական հաստատութեան գանձանակը, որպէս զի յարատևէ և լինի մի ապաստան բազում խղճալի հայ որբերի, որոնցմով լիքն է դեռ Ատրպատականը։

Ազգիս Վեհափառ Հայրապետն արդէն միշտ ցանկանում է, որ այս տեսակ ազգային բարեսիրական հաստատութիւններ ծաղկին և բարգաւաճին ամեն տեղ և այս պատճառով Նորին Ս. Օծութիւնը հետևեալ յանձնարարականով բարեհաճեց քաջալերել մեզ այն օրից, երբ որոշեցինք Պարսկաստան՝ մեկնումն աշխատելու ազգային այս խոպան դաշտում։

Առ վսեմական Առաջնորդն հայոց Ատրպատականի։

Ըստ պատուիրանի Վեհափառ Հայրապետի ազգիս՝ գիտեմն հաղորդել Ձերում Սրբազնութեան, զի մատուցանողն թղթոյս հայազն ուսումնական երիտասարդ պ. Միհրան Բաղդասարեան, անձն վստահելի և քաջածանօթ Նորին Վեհափառութեան, ցանկայ ի սահմանս Պարսկաստանի բանալ զազգային Որբանոց, մխիթարել վասն այս օրինակ մարդասիրական և հասարակ օգտաւէտ ձեռնարկութեան բարեսէր երիտասարդին. Վեհափառ Հայրապետն գիտակ գոլով բարեսիրութեան Ձերում, պատուիրեաց գիտելս յանձնարարել Ձերում սրբազնութեան զպ. Միհրան Բաղդասարեան և միանգամայն զազգօգուտ ձեռնարկութիւն նորին, և հուսայ, զի դուք ոչ զլասջիք ընձեռել զկարևոր հովանաւորութիւն և աջակցութիւն Ձեր, զի ձեռնարկութիւնս այս յաջողութեամբ գնասցէ և արդիւնաւոր լինիցի ի փառս Աստուծոյ, ի մխիթարութիւն ամենայն բարեսիրաց յօգուտ անխնամ և թշուառ որբոց և ի փառաւորութիւն անուան հիմնադրի, որոյ գործըն արժանի է ամենայն համակրանաց և օժանդակութեան։

(ստոր.) Խորէն եպիսկոպոս Ստեփանէ։

Նորին Ս. Օծութիւնը քաջ ճանաչելով ինձ որպէս մի ձեռնհաս անձ յանձնարարում էր և ես էլ որ ինքս գիտեմ «հաստատուն անձնանուէր ազգիս մշակ կրճատւած», փոքրի ցաւալի դէպքերից խրատուած և սթափուած ահա այսօր դիմում եմ ազգիս ներկայ հրաւէրով և յանձնարարութեամբ խնդրելով անմիջական օգնութիւն և պաշտպանութիւն մեր այս [illegible] ազգային ձեռնարկութեան։

Որբեր որդեգրողների, ինչպէս նաև բարեսէր նուիրատուների անունները շարունակ կըհրատարակուին ազգային լրագրներում. որբերի նկարները կուղարկուին *) որդեգրողներին և եռամսեայ հաշիւ և տեղեկագիր կըներկայացուի բարեսէր հասարակութեան լրագրների միջոցով։ Դրամական որևէ նպաստ կամ իրեղէն, ինչպէս նաև գործի յառաջադիմութեան մասին որևէ թելադրութիւն, որբեր որդեգրելու համար առաջարկութիւն պէտք է ուղղել մեր հասցէին՝— Միհրան Պաղդասարեան, Հայկական Որբանոց, Ղալասար, Սալմաստ (Պարսկաստան)։

Դրամ պարունակող նամակները և ծրարները պէտք է ապահովագրել։

Մնամ միշտ անձնուէր ազգիս
Միհրան Պաղդասարեան

Ղալասար, Սալմաստ 6/18 յուլիսի։

---

*) Խմբագրութիւնս ստացել է այդ նկարներից մէկը։ Խմբ.

կեղեցի, որի վրայ, կարծում եմ, 30 - 40 հազարից պակաս չի գնացել։ Այդ եկեղեցում քահանայ կայ և մէկ վարդապետ, որը և գաւառիս յաջորդն է։

Եկեղեցին միմիայն շաբաթ և կամ տօն օրերի նախընթաց երեկոներն են այցելում, մնացեալ օրերը, անգամ կիրակի պատարագին, հազիւ թէ մի երկու մարդ գտնէք եկեղեցում։ Բացի այդ՝ եկեղեցի այցելողների թիւը բաւականաչափ է ծննդեան ու Զատիկ տօների ճրագալոյցին և Խաւարման գիշերը. իսկ մնացեալ տօներին, ինչպէս՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի, Աստուածածնի տօները, Համբարձման, Հոգեգալստի, Վարդավառի օրերը (և այլն),—20-ից մէկն է միմիայն եկեղեցի գալիս։

Ուրեմն,—ում համար են երկրորդ եկեղեցի շինում. քաղաքն էլ այնքան մեծ չի, որ ասենք, թէ մի եկեղեցի ունենալն այդ կողմից նեղութիւն տայ բնակիչներին։

Ես շատերի հետ խօսք եմ բացել այդ բանի մասին, շատերից հարցրել եմ, թէ ինչու համար է, ում համար է շինում նոր եկեղեցին։ Բնակիչների մեծամասնութիւնը համաձայն է, որ մէկ եկեղեցին էլ բաւական է Նախիջեւան քաղաքին, բայց... «Է՛հ, բարի գործ է,—աւելացնում են,—թող՝ յիշատակ մնայ»։

Բարի գո՛րծ... յիշատա՛կ... գեղեցիկ խօսքեր են, բայց նախիջեւանցիների արածը չի համապատասխանում այդ խօսքերի ներքին իմաստին։ Բարի գործը եթէ որոշ հասարակութեան պահանջը չի, նա անկոչ հիւրի է նմանում։ Յիշատա՛կ... ինչու նախիջեւանցիները չուզեցին ներկայ պայմաններին աւելի համապատասխան, աւելի օգտաւէտ, շօշափելի և բնական օգուտ բերող մի գործով յաւերժացնել իրենց։

Կրկնում եմ՝ ես նոր եկեղեցիներ շինելու իղձերին դէմ չեմ. ես միայն ուզում եմ ասել, որ ամեն մի նոր բան շինելիս, որի հետ մեծամեծ ծախքեր են կապուած, պէտք է հասարակական պահանջն աչքի առաջ ունենալ։

Երեսուն հազարն այնքան մեծ փող է, որ նրանով մեծ ծառայութիւններ կարելի էր անել և՛ ազգին, և՛ հասարակութեանը։

Օրինակ, այդ գումարի տոկոսներով կարելի էր պահել հէնց նոյն իսկ ճեմարանում ոչ պակաս, քան երեք որդեգիր թոշակառու։ Բայց այդ, այդ գումարի տոկոսով կարելի էր տարին մի քանի համալսարանական ուսանող պահել և այլն, և այլն։ Էլ չեմ խօսում ուրիշ բարեգործական ճանապարհների մասին։

Ինձ կարող են ասել, թէ այդ հազարները կոպէկ կոպէկ է հաւաքած, տարիների ընթացքում է հաւաքած։ Շատ բարի.—քանի որ այդպիսի մեծ գումար նախիջեւանցիները. նուիրել են մի քանի տարիների ընթացքում մի եկեղեցի շինելուն, ուրեմն այդպիսի մի գումար նրանց շրջանում՝ որոշ տարիների ընթացքում՝ կարելի էր հաւաքել առհասարակ։ Իսկ եթէ այդպէս է. միթէ եկեղեցի շինելու օգտին տուողները չէին տալ ճեմարանում սան, համալսարանում ուսանող և կամ մի ուրիշ բարեգործական նպատակի համար... *)։

Իմ նկատողութեան նպատակն, ի հարկէ, այն չէ, որ Նախիջեւանի սկսած եկեղեցին կիսատ թողնեն և չաւարտեն, և կամ շինածն էլ քանդեն. —դա մի մեծ միամտութիւն կը լինէր։ Ընդհակառակն՝ քանի որ սկսել են շինել, մեծ գումար են ծախսել և շինութեան գլխաւոր մասն արդէն պատրաստ է, այժմ պէտք է պակաս 6—7 հազարն էլ շտապել՝ լրացնել, որպէս զի շինութեան աւարտումը մի քանի տարով էլ չյետաձգուի ի զուր։

Բայց իմ նկատողութիւնով ես զգուշացնում եմ այն անձերին, այն ընկերութիւններին, որոնց ձեռքն են անցնում հասարակական գումարներ։ Իմ ասելիքն այն է, որ այդ գումարները կարելի է ծախսել միայն այնպիսի գործերի վրայ, ինչ գործերի որ հասարակութիւնը յիրաւի պահանջ է զգում։

Յանցանք է հասարակական գումարները ծախսել, ինչպէս ռուսն է ասում՝ спустя рукава,—յանցանք է ոչ միայն այն հասարակութեան առաջ, որից հաւաքում է գումարը, այլ և ամբողջ ազգի առաջ։

Յովհաննէս Ղահնազարեան

Հին-Նախիջեւան.

---

*) Ոչ, չէին կարող տալ, պատերի շինութիւնը դեռ աւելի գին ունի, քան հոգւոյ շինութիւնը.—քարը կարելի է տեսնել, ձեռքով շօշափել.... Խմբ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծարգոյ պ. խմբագիր,

Խնդրում ենք բարեհաճէք տպագրել ձեր պատուական թերթում հետեւեալ գրութիւնը.

Կոնսիստորիայի գրութեամբ, որ ի 17-ն յունիսի 1898 թ. № 2463 հաստատուելով հաշուետես Աւետեաց ս. Աստուածածնի եկեղ. եռամեայ ժամանակով մենք յուլիսի 14-ին թուղթ գրեցինք նոյն եկեղ. երէցփոխ պ. Կարալեանին՝ հրաւիրելով նրան ամսոյ 17-ին ժողովի, խնդրելով միենոյն ժամանակ, որ նա իւր հետ ներկայացնի եկեղեցու հաշիւներն ու մատեանները. սակայն պ. Կարալեանը չէր ընդունել թուղթը, ասելով թէ՝ «ես նրանց չեմ ճանաչում և չեմ ընդունում»։ Մենք երկրորդ անգամ նորից թուղթ ուղարկեցինք ամսոյ 21-ին՝ 26-ին հրաւիրելով, բայց պ. Կարալեանն էլի չէր ընդունել և նոյն պատասխանը տուել։

Այս մասին հրապարակով յայտնելով յարգելի ծխականներին՝ մենք կվարուենք այսուհետեւ պ. Կարալեանի հետ օրէնքով, որին և ուղարկուած է կոնսիստորիայի մեզ ուղարկած գրութեան մի օրինակը։

Հաշուետեսներ՝ Յով. Մալխասեան, Ա. Ղահրիկեան, Դ. Քանանեան։

Թիֆլիս, 23 յուլիսի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՂՈՒՍԱՐ աւան, 10 յուլիսի.—Մեր անցեալ թղթակցութեանց մէկում խոստացանք Ղուսար աւանի մասին ես մի քանի խօսք գրել. այժմ քանի որ այնտեղ մի քանի նշանաւոր դէպքեր տեղի ունեցան, հարկ է այդ աւանի վրայ մի թեթեւ ակնարկ ձգել։

Ինչպէս արդէն անցեալներում յիշել ենք, այդ աւանը գտնւում է Ղուբայից դէպի հիւսիս 11 վերստ հեռաւորութեան վրայ։ Ընկած է մի փոքրիկ նեղ հովտում, որի հարաւային կողմից հոսում է Ղուսար-չայ գետը, որ իւր ակիզբն առնում է Կովկասեան Շահ-Դաղի ստորոտից։ Գետի ափին շինուած է Ղուսարի աղբիւրը՝ ջուրը մաքուր, ջինջ ու սառն։ Աւանը գետից բարձր է, ծառաստան, մեծ մասամբ անպտուղ, անտեր, համարեա մեծ մասը, ռուսական շինութիւններ են։ Երբ Ղուբայից հանում էք վերջին բլուրին, որտեղից խոր հովտի մէջ երեւում է Ղուսարը իւր երկաթածածկ կտուրներով, ձեր աչքի առաջ պատկերացած տեսարանը բաւական գեղեցիկ տպաւորութիւն է գործում և դուք կարծում էք, որ մի փոքրիկ և գեղեցիկ քաղաք պիտի մտնէք։ Ձեր կանգնած տեղից ուղիղ դէպի հիւսիս, դէմ առ դէմ, մի այլ բլրի վրայ ձեր աչքին մի սպիտակ բան է երեւում, որ թւում է թէ քար է. այդ Ղուսարի հանգստարանն է, որ աւանի ամենալաւ տեղերից մէկն է։ Դէպի արեւմուտք Շահ-Դաղն է հսկայի պէս կանգնած ձեր դէմը, իսկ դէպի արեւելք՝ Կասպեան ծովի կապոյտ ջուրն է երեւում։ Մտնում էք քաղաքը. փողոցները քարքարոտ, կեղտոտ, փոշոտ՝ զգում էք, որ գիւղի մէջ էք։ Օդը մաքուր, ամառը բաւական խոնաւ և աւելի զով Ղուբայից։ Աւանի արեւեան մասում կառուցուած են զօրանոցների մեծամեծ շինութիւնները և նրանցից մօտիկ ուղղափառ զինուորական եկեղեցին։ Հիւսիսային մասում, հանգստարանի բլրի ստորոտում ընկած է զինուորական մեծ այգին, ամբողջապէս մի ծառաստան, որի մէջ շինուած է մի մեծ ռոթոնդ—զինուորական ամառային կլուբը։ Այգուց դէպի արեւելք կայ մի պարտիզակ, որի մէջ կանգնեցրած է քարուկրեայ մի մեծ արձան։ Այստեղից քիչ բարձր դէպ արեւմուտք գտնւում է կաթոլիկաց եկեղեցին, որ ժամանակին կառուցուած է եղել կաթոլիկ զինուորների համար, որոնց թիւն, ըստ երեւոյթին, պէտք է որ բաւական նշանաւոր եղած լինէր։ Մեծի պահոց օրերում իւրաքանչիւր տարի միմի շաբաթ Ղուբայի հայոց քահանան տեղւոյն մի բուռն գաղթական հայերին խոստովանելու և հաղորդելու համար այնտեղ էր կատարում ժամերգութիւնը և իւրաքանչիւր անգամույ համար յօգուտ այդ եկեղեցւոյ վճարում էր տասն ռուբլի։ Բայց յետոյ այնպիսի մեծամեծ պահանջներ արին, որ ժողովրդի ուժից վեր լինելով՝ հնարաւոր չեղաւ ժամերգութիւնն այնտեղ շարունակել. այժմ յիշեալ օրերում մասնաւոր տներում է տեղի ունենում այդ։ Հայ ընտանիքների թիւն այժմ 10—12-ի է հասնում. ժամանակով 30—40 էր նրանց թիւը։ Սրանից 6—7 տարի առաջ Ղուսարումն էր գտնւում Շիրվանեան յայտնի քաջ զօրագունդը, մօտ 2000 հոգուց բաղկացած։ Այդ ժամանակ առեւտուրը մեծ կենդանութիւն ունէր, աւանն էլ ըստ ամենայնի ուրախ կերպարանք. հայերի թիւն էլ շատ էր, թէեւ մեծ մասամբ միկիտանչիներ։ Այժմ այդ զօրագունդը տեղափոխուած է Դաղստան Խասա-Իւրթ կոչուած տեղը, իսկ Ղուսարում մնացել է մի փոքրիկ գունդ միայն 3—4 հարիւր հոգուց բաղկացած։ Զօրքերի հեռանալով՝ առեւտուրը բոլորովին ընկաւ, աւանը մի աղքատիկ գիւղի կերպարանք ստացաւ, ցրուեց և վաճառականների մեծ մասը, մնացին նրանք միայն, որոնք հնարաւորութիւն չունեցան հեռանալու և կամ իրենց անշարժ կայքերով կապուած էին նրա հետ։

Ղուսարն այժմ մի ռուսական գաղթական աւան է, կառավարւում է գիւղական թաղապետի ձեռքով. կան այնտեղ և գաւառական ոստիկան, ոստիկանատուն, գաւառական քննիչ ու բժիշկ։ Նախ քան ռուս գաղթականութեան հիմնուելը, այդ աւանը թրքաբնակ էր և նոյն անունն էր կրում. ներկայումս թուրքերը քշուած են դէպի արեւելք և 6—7 վերստի վրայ մի նոր գիւղ են շինել՝ դարձեալ Ղուսար անունով։ Վերոյիշեալ պարտիզակի մէջ կանգնեցրած արձանի մի երեսի մակագրութիւնից պէտք է եզրակացնել, որ ռուսական այդ գաղթավայրի գոյութիւնը 1724 թուականից *) պէտք է լինի, թերեւս լեզգիների դէմ մղուած սկզբնական պատերազմներից յետոյ։

Այդ քարուկրեայ արձանի արեւմտեան երեսում արձանագրուած է ռուսերէն՝ «Ширванцамъ, со славою павшимъ въ бояхъ за Царя и Отечества 1724—1875 г.». երկրորդ երեսում՝ «За Богомъ молитва, за Царемъ служба не пропадаетъ». երրորդում՝ «Храбрымъ предшественникамъ потомки» — իսկ չորրորդում՝ «И память ихъ въ родъ и родъ»։ Արեւելեան երեսի ներքին մասում մի պղնձեայ տախտակի վրայ արձանագրուած են 69 կտրիճների անունները, որոնք հերոսական մահով կնքել են իրենց մահկանացուն լեզգիների դէմ մղած պատերազմներում։ Այդ արձանագրութիւնը կրում է 1875 թ. օգոստոսի 15-ը։

Ղուբայից—Ղուսար ճանապարհին անցեալներում գտնւում էր երկու թրքական գիւղ, վերջինը Խուջ անունով, երեք վերստ մնացած մինչեւ Ղուսար։ Տեղւոյն ժողովրդի աւազակութեան պատճառով Ղուբայից Ղուսար գնալը մեծ դժուարութիւն էր ներկայացնում, մանաւանդ 1888—1891 թուականներին, երբ Մէշեդի-Մէջիդի յայտնի աւազակային հրոսակն աջ ու ձախ թալանում, ապստամբութիւններ էր կատարում. սպանութիւններին թիւ ու համար չկար։ Ժամանակաւ Ղուբայի գաւառապետ պ. Ստոլչանսկին երկար աշխատեց նրանց բռնելու և մեծ թւով զինուորներով երկար տարիներ նրանց իզուր հետեւելուց յետոյ՝ երբ տեսաւ, որ իւր ջանքերն ապարդիւն են անցնում և աւազակային խումբը գնալով աւելի ծայրահեղութեան է հասնում, մտածեց մի այլ ծրագրով աւազակութեան առաջն առնել։ Առաջարկեց Կովկասի նախկին կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովին միջնորդել մի քանի թրքական գիւղեր գաղթեցնել և նրանց տեղը բնակեցնել ռուս գաղթականներ։ Ծրագիրը Բարձրագոյն հաստատութիւն ստանալով երկու թէ երեք գիւղ 1891 թուականին, եթէ չենք սխալւում, որոնց թւում և յիշեալ Խուջը, գաղթեցնւում է Ռուսիայի ներքին վայրերը, նրանց տեղն այժմ հիմնուած են ռուսական գաղթականութիւններ, Խուջը վերակոչելով Նիկոլայեւկա։ Խուջում մնացած է կիսաքանդ միայն թրքական մզկիթը, մնացած տների հետքը չկայ։ Ընդարձակ դաշտերը, արօտատեղիներն ու այգիները մնացին իբրեւ սեփականութիւն նոր գաղթականների, որոնք իրենց կողմից էլ նորանոր բանջարանոցներ ու այգիներ աւելացնելով՝ նախկին թրքական կեղտոտ գիւղը փոխարկեցին մի գեղեցիկ մաքուր գիւղի։ Այդ գաղթականութեան հիմնուելու օրից՝ Ղուսարի այդ ճանապարհն աւազակների կողմից միանգամայն ապահովուած է։

Արեգ

---

*) Չը գիտենք, 1724-ին ռուսաց պետութիւնը լեզգիների դէմ պատերազմ ունէ՞ր մղած արդեօք, — Շամիլին նուաճելը 1853-ին տեղի ունեցաւ, — թէ արձանագրելիս՝ 8-ի փոխարէն սխալմամբ 7 լինի փորագրուած։ Ծ. յ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍՊԱՆԻԱ.—Բաւական հետաքրքրական երեւոյթ է ներկայացնում ներկայումս սպանիական մամուլը։ Սահմանադրական մի քանի իրաւունքների վերացման հետեւանքն ամենից աւելի աչքի է ընկնում մամուլի մէջ։ Այդ մասին եղած կարգադրութեան հրատարակման առաջին իսկ օրուանից՝ մինչեւ անգամ սահմանադրական այնպիսի լրագրներ, որպիսիք «Heraldo», «Fpoca», «Corresp. Militar» լրագրներն են, սկսեցին լոյս տեսնել ահագին բաց տեղերով, որոնք ցոյց էին տալիս, թէ ցենզուրի կարմիր թանաքն անխնայ աւերածութիւն է տարածում նաև այդ լրագրների էջերում։ Բայց այդ բաց տեղերն էլ վտանգաւոր եղան, որովհետեւ սպանիացիների վառ երեւակայութիւնն այդ բաց տեղերը լցնում էր ամեն տեսակ սարսափներով, ուստի Սագաստան կարգադրեց, որ լրագրների բաց տեղերը լցուեն անմեղ յօդուածներով, պատմութիւններով, անեկդոտներով և այլն։ Այդ կարգադրութիւնից լրագրներն արդէն ուրիշ, աւելի մաղալու բնաւորութիւն ստացան։ Այսպէս, «Heraldo»-ի, Սագաստայի այդ հրամանից յետոյ, առաջնորդող յօդուածի տեղ լոյս տեսաւ Սագաստայի կենսագրութիւնը, իսկ հետեւեալ օրը—մի վէպի շարունակութիւնը, որի գլխին դրուած էր առաջնորդող մեծ յօդուածից ցենզուրի թողած 14 անկատ տող։ Մի ուրիշ լրագիր՝ «Progresso», որ ամեն օր լոյս էր տեսնում քաղաքական-երգիծաբանական նկարներով, սկսեց իւր բաժանորդներին զանազան նկարներ տալ սրբազան պատմութիւնից։ Նոյնն է նկատւում և միւս լրագրների մէջ։

—

ԳԵՐՄԱՆԻԱ.—Հաւաստացնում են, որ Սպանիան Միացեալ Նահանգներից հաշտութիւն է խնդրել Վիլհելմ կայսրի սպանական կառավարութեան վրայ գործած ճնշման շնորհիւ։ Գերմանական կայսրը խիստ ցանկանում է, որ թշնամական գործողութիւնները դադարեն, որովհետեւ Միացեալ Նահանգների հասարակաց կարծիքը գրգռուած է Գերմանիայի դէմ այն բանի համար, որ նրա համակրանքը Սպանիայի կողմն է։ Իսկ այդ դժգոհութեան հետեւանքն այն կարող է լինել, որ Միացեալ Նահանգները կը հրաժարուեն առեւտրական նոր դաշնագիր հաստատել Գերմանիայի հետ, և երկու ազգերի միջեւ առեւտրական կատաղի կռիւ կարող է ծագել։

—

ԱՄԵՐԻԿԱ.—Գեներալ Շաֆտերը զինուորական մինիստրութեանը զեկուցում է տուել լրագրի թղթակից Սիլվեստր Սկոուէլի Սանտ-Եագոյում իրեն հասցրած վիրաւորանքի մասին (ինչպէս յայտնի է, Սկոուէլը նրան ապտակ էր տուել)։ Մինիստրութիւնն յարմար չի գտել հրատարակելու այդ հետաքրքրական դոկումենտը։ Բայց «Daily Herald»-ի թղթակիցը կարողացել է իրեն՝ Շաֆտերի հետ տեսնուել և հաղորդում է նրա ասածը. «Սկոուէլը պատերազմի ժամանակ ամենքի հետ կռւում էր։ Նա վիրաւորել իմ շտաբի սպաներից մէկին և ինձ հետ ոչ թէ միայն յանդգնաբար վարուեց, այլ և հարուածեց ինձ։ Այդ վարմունքի համար կարելի էր նրան գնդակահար անել առանց դատարանի, բայց ես չկամեցայ այդպիսի ծայրահեղ միջոցի դիմել, թէեւ նա արժանի էր դրան»։

—

ՖՐԱՆՍԻԱ. — Լրագրներն հաղորդում են, թէ մինիստրութեան անդամների միջեւ տարաձայնութիւններ են ծագել։ Դրայֆուսին հակառակ մամուլը Բրիսոնին յանդիմանում է, որ նա իւրեն կողմնակից լրագրներին թոյլ է տալիս ուղղակի յարձակումներ գործելու զինուորական մինիստր Կաւենեակի վրայ։ Այս օրերս լուր տարածուեց, թէ վերջինս հրաժարւում է իւր պաշտօնից, բայց այդ լուրը պաշտօնապէս հերքւում է։

—

ԿՐԵՏԷ.—Կրետէի զինուորական նահանգապետ Ջեւադ-փաշան սուլթանին հրաժարագիր է ներկայացրել այն պատճառաբանութեամբ, որ Կրետէի թուրքաց զօրքերի թիւը կրճատուած է։ Ջեւադ փաշան գտնում է, որ իրեն, իբրեւ նախկին մեծ վէզիրի, վայել չէ թուով աննշան մի զօրքի կառավարիչ լինել։

—

ԱՒՍՏՐԻԱ.—Վիեննայից հեռագրում են, որ ունգարական մինիստր-նախագահ Բանֆին պատրաստւում է հրաժարական տալ։ Աւստրիական մինիստր-նախագահ գրաֆ Թունի դրութիւնը նոյնպէս անյուսալի է։ Ասում են, թէ նրան յաջորդ կը նշանակուի Բոսնիա-Հերցոգովինայի կառավարիչ բարոն Կալլայը։

—

ԻՏԱԼԻԱ.—Պատերազմական դրութիւնը, որ հրատարակուած էր վերջին անկարգութիւնների պատճառով, ներկայումս վերացուած է Նէապոլի գաւառում։ Մինիստր-նախագահ Պէլլուն գնում է Վիեննա և Բեռլին խորհրդակցելու գրաֆ Գոլուխովսկու և իշխան Հոհէնլոէի հետ։

—

ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Սոֆիայում շուտով պիտի գումարուեն Մակեդոնիայի յեղափոխական մասնաժողովի անդամները։ Ժողովի նպատակը պիտի լինի՝ խմբագրել և մեծ պետութիւններին ուղարկել մի յուշագիր Մակեդոնիայի ռեֆորմների մասին։ Միենոյն ժողովում պիտի քննուի, թէ ինչ միջոցներ պիտի ձեռք առնուեն ի դէպս, եթէ յուշագիրն յաջողութիւն չունենայ։

—

ԹՈՒՐՔԻԱ.—Գերմանական լրագրների ասելով, Բուլղարիայի իշխանը սուլթանին մի հեռագիր է ուղարկել, որի մէջ մասնակից է անում Ռուսիայում իրեն ցոյց տրուած փառաւոր ընդունելութեան վրայ։ Սուլթանը պատասխանեց մի հեռագրով, որի մէջ շնորհակալութիւն է յայտնում իրեն ուղարկուած հեռագրի համար և ասում է, որ Ռուսիայի և Բուլղարիայի միջև եղած փոխադարձ բարեկամական յարաբերութիւններն ի նկատի առնելով, ինքը կատարելապէս համոզուած էր, որ ընդունելութիւնն հէնց այդպէս էլ պէտք է լինէր։

—Օտարերկրեայ լրագրները հաւատացնում են, որ Տրիպոլիսից մինչև Պարսից ծոցը երկաթուղի անցկացնելու համար Թուրքաց կառավարութիւնից իրաւունք է խնդրում Վիեննայի ռուսաց դեսպանի եղբօր որդին, գրաֆ Վ. Կապնիստը մի միջազգային սինդիկատի անունով։ Անգլիական լրագրները, հաղորդելով այս լուրը, նկատում են, որ անգլիացիներն արդէն շատ անգամ փորձել են ստանալու յիշեալ իրաւունքը, բայց յաջողութիւն չեն ունեցել։

—

ՉԻՆԱՍՏԱՆ.— Չինաստանում ծագած ապստամբութիւնն հետզհետէ մեծ ծաւալ է ստանում։ Քուանգ-Սի գաւառում ապստամբների թիւը հասնում է 40,000-ի։ Իսկ մանդարինները 7,400-ից աւելի զօրք չունին։ Ապստամբները Ինի-Ֆինում ջարդել են 2,000 հոգուց բաղկացած մի զօրագունդ։

ԲԻՍՄԱՐԿԻ ՄԱՀԸ

—

Բեռլինից «Ռուսսկ. Վեդ.»-ին հեռագրում են, որ գործին լաւ տեղեակ անձեր մի քանի օր առաջ արդէն գիտէին, որ իշխ. Բիսմարկի դրութիւնն անյուսալի է։ Շվենինգերը (իշխանի անձնական բժիշկը) օրհասական վախճանի ժամանակն ամենաշատը որոշել էր 8 օր։ Հինգշաբթի լոյս ուրբաթ գիշերը սկսեց կրիզիսը, իսկ շաբաթ օրուայ ընթացքում հիւանդի դրութիւնը բաւական վատացաւ։ Վիլհելմ Բիսմարկը, որ դրանից առաջ մեկնել էր մի քանի օր Բեռլին, յետ կանչուեց։ Իշխանի ընտանիքի անդամները մեծ անհանգստութեան մէջ էին, որովհետև Շվենինգերը մեկնել էր Սաքսոնիա և դժուար էր յուսալ, որ նա անյապաղ վերադառնայ։ Երբ նա եկաւ, նախկին կանցլերը դեռ կենդանի էր։ Վախճանուեց Շվենինգերի ձեռքերի վրայ։ Ընտանիքը և մօտիկ մարդիկ գտնւում էին հարեան սենեակում։ Իշխ. Բիսմարկի մահը Բեռլինում իմացան կիրակի առաւօտեան։ Լրագրների մեծ մասը յօդուածներ է նուիրում հանգուցեալ կանցլերին։ Ոչ թէ միայն պահպանողական, այլ և ընդդիմադիր կուսակցութեան բոլոր թերթերը, օրինակ՝ «Vossische Zeitung»-ը և «Volks-Zeitung»-ը, նրա պատմական մեծ արժանիքների հարկաւոր գովասանքն են անում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փրանսիացի Ժեւլեր լրագրողը ներկայումս ոտով ճանապարհորդութիւն է կատարում աշխարհի շուրջը 100,000 ռուբ. գրազով։ Այս փողերը դրուած են Պարիզի բանկը առանձին սինդիկատի միջոցով. Ժեւլերը կարող է պահանջել այն՝ 1900 թ. յունիսի 1-ի առաւօտեան, եթէ իր յանձն առած պարտաւորութիւնն իրագործէ։ Նա այժմ 34 տարեկան է, լրագրական գործով 12 տարի է պարապում, որից 3 տարին նա անց է կացրել ճանապարհորդութիւնների մէջ։ Այժմ նա արդէն անցել է 23,000 մղոն տարածութիւնից աւելի և մնում է անցնելու դարձեալ մօտ 17,000 մղոն։ Նա գնում է երկաթուղիների գծերի ուղղութեամբ, որպէս գի չմոլորուի։ Նրա կեանքը դեռևս միայն մի անգամ է վտանգի ենթարկուել. այդ Ասորիքումն էր, երբ նա գերի ընկաւ մի խումբ Թուրք աւազակների ձեռքը, բայց նրան յաջողուեց փախչել։ Ժեւլերը չգիտէ այն երկրների շատերի լեզուները, որտեղից անցնում է, բայց նա հասկացնում է իր միմիկայով և հաւատացնում է, որ ձեռների նշանայի խօսակ-ցութիւնով նա միշտ հասել է այն բանին, ինչին որ կարիք է զգացել։

—

Աշխարհիս ամենամեծ դահլիճը.—Առաջիկայ 1900 թ. Պարիզի ցուցահանդէսը կազմակերպող յանձնաժողովը մօտ օրերս հաւանութիւն է տուել պ. Ռուլէն ճարտարապետի ներկայացրած մի անսովոր մեծութեան դահլիճի յատակագծին, որը պէտք է հիմնուի մեքենաների գալերէյում և իր մեծութեամբ պէտք է աշխարհիս առաջին դահլիճը լինի, ուր տեղաւորուելու են 15,000 հանդիսատեսներ։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ԼՈՆԴՈՆ, 22 յուլիսի.—Լորդերի պալատ։ Լորդ Սոլսբըրին պատասխանում է առաջարկուած հարցին, որ Պեկինի բրիտանական դեսպանին կարգադրուած էր չինաց կառավարութեանը յայտնելու, որ Անգլիան կօգնի Չինաստանին, եթէ որևէ պետութիւն յարձակում գործի նրա վրայ այն բանի համար, որ Չինաստանը մի բրիտանացու իրաւունք է տուել երկաթուղիներ անցկացնելու և հասարակական աշխատանքներ կատարելու կամ այդպիսի աշխատանքների աջակցելու։ Այնուհետև Սոլսբըրին ասում է. «Չինական բոլոր գործերի ետևը Ռուսիա տեսնելը հիւանդոտ յատկանիշ է։ Բոլորովին սխալ բան է, որ ասում են, թէ երկաթուղիներ անցկացնելու իրաւունք ստացողները քաղաքականապէս իշխում են երկրին։ Եթէ Ռուսիային այնպիսի առաւելութիւններ տրուէին, որոնք թոյլ տային նրան խաչընդոտ հանդիսանալ անգլիական առևտրի դէմ,—դա իսկապէս Թեան-Ծինի դաշնագրի խանգարումն կլինէր, որի դէմ Անգլիան կըկռուի բոլոր ուժերով. բայց եթէ երկաթուղիների շինութիւններին ով և իցէ կըձեռնարկի, առանց այդպիսի արտօնութիւններ ստանալու, այդ բանի համար ուրախանալ միայն կարելի է»։

ՊԱՐԻԶ, 23 յուլիսի.—Ուղղիչ ոստիկանութեան դատարանում երէկ քննւում էր Ժիւղէի և «Petit Jeurnal»-ի դէմ Զոլայի յարուցած դիֆամացիայի գործը։ Քննւում է այն հարցը, թէ ուղղիչ ոստիկանութեան դատարանն արդեօք իրաւունք ունի՞ քննելու այդ գործը, քանի որ Զոլայի հայրը — դիֆամացիայի առարկան—պետական ծառայութեան մէջ էր։ Լաբորու առարկութիւններից յետոյ, որը պահանջում էր, որ դատարանն իրեն կոմպետենտ համարի այդ գործը քննելու նաև «Petit Jonrnal»-ի փաստաբանի պատասխանից յետոյ, ուղղիչ ոստիկանութեան դատարանը կոմպետենտ համարեց իրեն և Զոլայի հօր յիշատակն անուանարկող յօդուածի հեղինակ Ժիւղէին դատապարտեց 2,000 ֆրանկ տուգանքի, հրատարակիչ Մարինոնին 500 ֆր. տուգանքի, պատասխանատու խմբագրին 500 ֆր. տուգանքի։ Բացի դրանից երեքը միասին 5,000 ֆրանկ պիտի տան վնասների և դատավճիռը տասը լրագրի մէջ հրատարակելու համար։

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ.— Մակ-Կինլէյը կիսապաշտօնական տեղեկութիւն ստացաւ, որ Սպանիան համաձայն է հաշտութեան պայմաններին։ Պաշտօնական պատասխանը սպասում են բոպէ առ բոպէ։

ՖՐԻԴՐԻԽՍՐՈՒՀԷ.—Վիլհելմ կայսրը և կայսրուհին մօտ մի ժամ մնացին ամրոցում, ուր հոգեհանգիստ կատարուեց։ Իշխան Բիսմարկի ընտանիքի անդամները կայսերական զոյգին ճանապարհ դրին մինչև երկաթուղու կայարանը։ Այս օրերս Բիսմարկի մարմինը ժամանակաւորապէս հողին կյանձնուի «Եղջերուների խմբի» մօտ, իսկ մի քանի շաբաթից յետոյ կտեղափոխուի դամբարանը, որի շինութեանը ձեռնարկել են։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ահա մօտենում է ամիս ու կէսը, որ մենք ընտանիքով եկել ենք Թիֆլիս, որպէսզի մեր կոյր տղի աչքերը բժշկել տանք, բայց դժբաղդաբար աւելի վատացաւ։

Այս ամիս ու կէսում, մենք քաղցած մնում էինք, դիմեցի Բարեգործական Ընկերութեանը, նրանք ինձ մի օգնութիւն չարեցին, ասացին որ փող չունին, և թուղթ տուին, վրան Բարեգործական Ընկերութեան կնիքը խփեցին և մէջը գրեցին, որ մենք այս մարդուն (ինձ) չենք օգնած։ Նա էլ քաղցածութիւնից ինչ ունէի ծախեցի, կերանք. հիմա էլ ոչինչ չունիմ, որ գրաւ դնեմ, կամ ծախեմ, որ ընտանիս և 5 զաւակներիս պահեցնեմ։

Այժմ ձեզ եմ դիմում, մեծապատիւ պարոններ, դուք գիտէք, ձեզ եմ ապաւինել. կխնդրեմ, որ օգնութիւն անէք և մեզ ազատէք այս դառն վիճակից։

Ամեն անգամ, երբ իմ զաւակներիցս նամակ եմ ստանում, սիրտս կտրտւում է, որ նրանք գրում են թէ՝ հայրիկ արի, քաղցած մեռանք, ինչ ունէինք ծախեցինք, կերանք, հիմա էլ բան չմնաց, որ ծախենք և ապրենք մինչև քո գալը։

Հիմա մի ճանապարհածախս չեմ կարող ճարել, որ գնամ Երևան իմ զաւակներիս մօտ։ Կխնդրեմ նորից, որ հրեշտակի նման օգնութեան հասնէք և մեզ ազատէք այս նեղութիւնից։

Ձեր խոնարհ ծառայ՝
Կարապետ Սաարունեանց

Հասցէս՝ Тифлисъ, Первый Гор. Нач. Пріютъ, Карапету Саарунянцу.
4—4

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

1898 թ. մայիսի 1-ից մինչև 1898 թ. նոյեմ. 1

Թիֆլիսից I-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. գիշերում է Մլէթում և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 7 ժ. 20 ր.։ II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և գիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառքը (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 2 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է եր. 9 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկաւկազ միւս օր եր 11 ժ. 20 ր.։

Վլադիկաւկազից հինգ տեղ ունեցող I կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մլեթում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.։ II-ը մեկնում է առ. 9. 30 ր. գիշերում է Գուդաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառքը (առանց գիշերելու) մեկնում է եր. 5 ժ. 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 7 ժ. 25 ր.։ II-ը մեկնում է եր. 9 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.։

—

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը № 1 *Բագուից Թիֆլիս* մեկնում է օրուայ 4 ժ. 50 ր., հասնում է *Թիֆլիս* առ. 8 ժ. 26 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* առ. 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում եր. 8 ժ. 47 ր.

Փոստային գնացքը № 3 *Բագուից Թիֆլիս* մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., հասնում է Թիֆլիս եր. 6 ժ. 33 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* եր. 7 ժ. 48 ր., հասնում է Բաթում առ. 8 ժ. 33 ր.։

Մարդատար գնացքը № 2 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* առ. 8. ժ. 20 ր., հասնում է Թիֆլիս ե, 8 ժ. 22 ր., մեկնում է *Թիֆլիսից Բագու* եր. 9 ժ. 05 ր., հասնում է Բագու օրուայ 3 ժամին։

Փոստային գնացքը № 4 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* եր. 8 ժ. 35 ր., ասնումն է Թիֆլիս առ. 9 ժ. 07 ր., մեկնում է *Թիֆլիսից Բագու* առ. 10 ժ. 57 ր., հասնում է Բագու առ. 5 ժ. 45 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. ԳԵՆԿԷ ԵՒ ԸՆԿ.
ՊԱՏԱՀԱԿԱՆ ԻՐԵՐ
Москва, Пассажъ Солодникова,
մուտքը նեղլինից։
ԱՄԵՆ ԲԱՆ
զանազան կահ-կարասիք, բրոնզ,
նկարներ, դաշնամուրներ, հայելիներ,
ժակոր և այլ ու այլ իրեր։
ԼԻԱԿԱՏԱՐ ԿԱՀԱՒՈՐԱՆՔ
(M.) 10,167 10—7

ՄՈՍԿՈՒԱՅԻ Ռ. ԿՍՕԼԵՐ ԵՒ ԸՆԿ.
ԳՈՐԾԱՐԱՆԻ
քիմիապէս մաքուր և բարձր որակութեան
ՍԵՂԱՆԻ ԱՂ։
Ծախւում կայ
ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ աւելի նշանաւոր
վաճառականների մօտ։
Այս աղն աղամանի մէջ կոշտեր չի
կազմում։
(Столовая соль)
(M) 14 3—1

АЛЬДЕХИДЪ ВЛАДІО
КРЕМЪ

Կաշին և դէմքը
փափկացնելու
համար

Главный складъ въ Москвѣ.
[illegible]
Малый флак. [illegible] к.
Больш. флак. 1 р.
МОЖНО ПОЛУЧАТЬ ВЕЗДѢ.
(M.) 51824 21—8

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ հոգաբարձութեան որոշման համաձայն՝ յայտնում եմ, որ առաջիկայ 1898—99 ուսման տարուայ համար ընդունւում են. 1) Դպրանոց մտնող աշակերտների խնդիրներ՝ մինչև սեպտեմբեր ամսի 1-ը. խնդիրների հետ պիտի անպայման ներկայացուին ծննդական և ծաղկի պատուաստման վկայականներ, առանց որոնց խնդիրները կմնան առանց հետևանքի և 2) Աշակերտներ ընդունւում են առաջին նախակրթարանում և գ. դ. ե. զ. դասարաններում։
(1071) 2—2 Պաշտօնակատար տեսուչ՝ Ս. Տէր-Գաբրիէլեանց

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՒՈՒԹԵԱՄԲ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Баку, прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդւում են՝ 1) առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ. 2) հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն 4) առևտրական տնտեսագիտութիւն 5) առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղացումն ձեռագրի)։

Պարապմունքները սկսւում են սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և «Եղբ. Ծովիանեան և Ընկ.» Բագուայ բաժանմունքում... Օտարաքաղաքացի ունկնդիրների յարմարութեան համար կուրսերում ընդունւում են գիշերօթիկներ։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը —տրւում են և ուղարկւում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնադրին՝ А. И. Теръ-Каспарову, Баку.
(1064) 25—7

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է, մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։

Աւանդւելի առարկաները սրանք են.—1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, (վատ ձեռքի—почеркъ—ուղղելը)։ Ուսումն սկսւելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները, սեպտեմբերի 1-ից, ամեն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սոլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ **ՁՐԻԱՊԷՍ** եղբ. Ծովիանեանների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսեր հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
25—8.
(1053)

Дозв. цензурою. Тифлисъ, іюля 24 го дня, 1898 г.
Տպարան Ա. Ի. Պետրովի
Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12 Телефонъ № 387.